ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2024 թվականի N 588-Ա

*06-112-0088-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԿԱԹՍԱՅԱՏԱՆ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ 0.11 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104 Լ հրամանով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով, հիմք ընդունելով Արմենակ Թաթուլի Հախինյանի դիմումը, անձնագրերի պատճենները, ժառանգության իրավունքի վկայագրերը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը՝

որոշում եմ

1.Վերականգնել Հայարփի Թաթուլի Հախինյանին, Սաթինե Թաթուլի Հախինյանին և Արմենակ Թաթուլի Հախինյանին ժառանգության իրավունքով պատկանող, կադաստրային 06-112-0088-0008 ծածկագրից առանձնացվող, համայնք Ալավերդի, Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող բնակելի տան և օժանդակ շինությունների՝ կաթսայատան, անասնաշենքի կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.11 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի հիմքերը, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

2.Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1956 թվականին կառուցված, կադաստրի կոմիտեում 2024CKTBFF ծածկագրով հաշվառված, բնակելի տունը, օժանդակ շինությունները՝ կաթսայատունը, ամասնաշենքը, Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Հայարփի Թաթուլի Հախինյանի (ծնված՝ 27.12.1983թ.), Սաթինե Թաթուլի Հախինյանի (ծնված՝ 27.02.1985թ.) և Արմենակ Թաթուլի Հախինյանի (ծնված՝ 30.08.1988թ.) ընդհանուր բաժնային սեփականությունը:

3. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի, Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-112-0088-0008 ծածկագրից առանձնացվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.11 հա մակերեսով հողամասին և հողամասում առկա գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 3-րդ փողոց, 18 փոստային հասցեն:

4.Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. ապրիլի 01
ք. Ալավերդի